ՍԱՍՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՉՄԲՈՒԽՏՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(27 սեպտեմբերի, կիրակի, 1998 թ.)

«Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ Մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք»:

(ՍՍՏԹ. ԻԴ 30)

Մատթեոսի ավետարանը մեզ կհիշեցնե մեր աշխարհի կործանման նշաններու մասին: Նա ժողովրդին հետևյալ կերպով կբացատրե, թե ինչպես պիտի գա աշխարհի վախճանը: Այն կըսե, թե երկինքին վրա պիտի երևնա մեծ նշան և աշխարհի չորս կողմերեն մարդիկ պիտի աղերսեն, լան, որովհետև, ահավասիկ, Աստծո հրեշտակը պիտի երևնա և այդպիսով մենք պիտի տեսնենք նշանը, որ մոտ է աշխարհի կործանումը: Եվ կըսե, այդ օրն ու ժամը ոչ ոք գիտե, միայն թե Հայրը, թե երբ պիտի պատահի, ուստի այս խոսքերը կարդալով, մենք պետք է մտածենք, սիրելիներ, արդյոք սպասենք այդ մեծ նշանին, որ պիտի գա երկնքի վրա և մեզ համար այդ ազդարարություն մը ըլլա, որպեսզի մենք ալ պատրաստվինք դիմավորելու վերջին դատաստանը, թե մնանք միշտ պատրաստ դիմավորելու աշխարհի վերջը:

Մեր առօրյա կյանքի մեջ շատ բնական է, երբ կտեսնենք, թե մեծ անձնավորություններ կուգան այցելելու մեր քաղաքը, կամ թե մեր գյուղը և թե հարկեն ներս եթե կարևոր հյուր մը հրավիրած ենք, ընտանիքի բոլոր անդամները մեծ խանդավառության մեջ կմտնան, մեծ պատրաստություններ կտեսնեն, մեծ անձնավորության պարագային ճամփաներն ու պողոտաները կզարդարեն, կհարդարեն և ամեն մարդ գիտե, թե ով է եկողը: Եվ ահավասիկ անոնք նշաններ են մեզի համար, թե կարևոր անձ մըն է, որ կուգա այցելելու մեր երկիրը: Եվ այս նշան մըն է ժողովրդին, թե ինչպես իրենք իրենց դրսևորեն և պատրաստվեն: Եվ ահավասիկ Ավետարանիչը իր կերպով կբացատրե, թե աշխարհի վերջը այդ նշանները այդպիսիք պիտի ըլլային: Բայց մենք, սիրելիներս, չգիտենք, թե ինչպես և երբ պիտի գա աշխարհի վերջը, ուստի մեզի կմնա ընելու կամ կատարելու մեկ բան, որ մենք միշտ պատրաստ ըլլանք դիմավորելու Աստծո վերջին օրը և հավատքով և արդար գործերով ներկայանանք Աստծո վերջին դատաստանին: Մեր այդ պատրաստակամությունը, մեր այդ հավատքը, որ մենք ունինք ի ծնե, և մեր կյանքի ընթացքին մեր հավատքը զարգացուցած ենք քրիստոնյա դաստիարակությամբ, ի գործ դնենք մեր առօրյա կյանքի մեջ, նախ և առաջ սիրելով մեկըզմեկս:

Տերը, որ գոյություն ունի մեր մեջ, այլևս ոչ մի թշնամություն կամ ոչ մի նեղություն կրնա հաղթել մեզ: Ուստի եկեք Քրիստոսի պատվիրանը գործնականորեն մեր կյանքին մեջ ներդնենք: Սիրենք մեկըզմեկս: Եվ ահավասիկ այսօր, այս նշաններեն մեկն ալ այն է, որ մենք հավաքված ենք

Մայր Տաճարի մեջ, պաշտելու զԱստված և լսելու Աստծո խոսքը: Եվ երբ կլսենք Աստծո խոսքը, այն լսելով պետք չէ բավարարվենք, այլ պետք է մեր կյանքի իսկ օրինակով ի գործ դնենք մեր առօրյայի մեջ, որպեսզի ոչ թե միայն խոսքով, այլ նաև գործով արժանի ըլլանք դիմավորելու վերջին դատաստանը:

Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կտոնե նաև Վարագա Սուրբ Խաչի տոնը: Ահավասիկ, ավանդությունը մեզ կըսե, թե Սուրբ Հռիփսիմե կույսը իր հետ ուներ Քրիստոսի խաչափայտեն մասնիկ մը և իր ժամանակի հալածանքներեն ազատվելու համար այն խաչի մասնիկը կպահե Վարագա լեռան մեջ, որը 7-րդ դարում ի հայտ կուգա մեծ տեսիլքով և Ներսես Շինող Կաթողիկոսը կկերտե այդ գեղեցիկ եկեղեցին Վարագա լեռան վրա և այդ օրը մեզի համար կդառնա ազգային տոն: Այդ խաչը, որ կպատկաներ համայն քրիստոնյաներուն, հայ ժողովուրդը հաստատելով Վարագա Սուրբ Խաչի տոնը, խաչը յուրացուցած և դարձուցած է նաև իր ազգայինը: Եվ այսօր, մենք, հավատարիմ մնալով Սուրբ Խաչի հարությանը, Սուրբ Խաչի պայծառությանը, եկեք, սիրելիներ, միասնաբար աղոթենք առ Աստված, թող Աստված տա խաղաղություն համայն աշխարհին, սեր և միություն մեր ազգին և ամենքիս կատարյալ առողջություն, գործոց բարյաց բյուր հաջողություններ: Այժմ և միշտ հավիտեանս հավիտենից. ամեն: